րի, թէ՞ նորածուն, աչառու բիւրոկրատների ձեռքով։ Այդ ինքնավար մարմինները կարո՞ղ են, մշակութային նպատակների համար, տուրքեր գանձել իրենց «ազգացուցակների» մէջ մտած անդամներից։

Ի՞նչ միամիտ հարցեր։ Մի առու փորելու, մի ծառ տնկելու մասին փող հարող բոլշեւիկ մամուլը չէ, յամենայն դէպս, որ լռութիւն պիտի պահպանէր այդ ամէնի մասին։ Առաջինը մենք պիտի լինէինք ուրախացողը, եթէ վաղը հակառակը ցոյց տրուէր։

Եւ սակայն յիշեալ բովանդակ պահանջների իրականացումն է միայն, որ մշակութային ինքնավարութիւն անուանուիլ կարող է։ Փոքրիկ Էսթոնիան մեծ խորհուրդներին էլ. օրինակ։ Կարող է ասուիլ՝ տեսէ՛ք, Անգլիան, Ֆրանսա, Ամերիկան եւս չեն իրագործում նրման ինքնավարութեան պահանջ։ Բայց նախ՝ դրանից մեր եւ ուրիշ փոքրամասնութեանց զոհացում չի տրուի։ Եւ յետոյ, այդ դէպքում ի՞նչ տարբերութիւն բոլշեւիկների եւ նրանց միջեւ։

Ազգային-մշակութային ինքնավարութիւնը մի պահանջ է, որից հայութիւնը հրաժարուիլ չի կարող եւ իրաւունք էլ չունի հրաժարուելու։ Խնդիրը վերաբերում է Խորհրդային Միութեան հայերի ուղիղ կէսին։ Այդ հարցի յաջող լուծումը մեզ համար նոյնչափ եւ դեռ աւելի մեծ նշանակութիւն ունի, իմ կարծիքով, քան մինչեւ իսկ այս կամ այն յատկացուած դաւառի կցումը Հայաստանին։ Միմիայն Անդրկովկասում 600 հազար հայեր կենսապէս շահագրգռուած են այդ հարցով։ Բայց դժբախտաբար մեր մամուլը, նաեւ կուսակցականը ,կարեւոր ուշադրութիւն չի դարձնում այդ խնդրի վրայ։ Մեր ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացնում ենք Հայաստանի սահմանների ընդարձակման խնդրի վրայ։

Աւելին կ՝ասենք։ Ազգային-մշակութային ինքնավարութեան յաջող լուծումը նպաստաւոր ազդակ պիտի հանդիսանայ հէնց Հայաստանի պետական ամրապնդման տեսակէտից։ Երբ ասում ենք հայ մշակութային ինքնավարութիւն Վրաստանում եւ Ատրբէջանում, այդ նշանակում է՝ ոչ միայն որոշ տարիների ընթացքում դպրոցական ցանցի չնորհիւ դրաճանաչ դարձնել հարիւր հազարաւոր հայեր, այդ նշանակում է ոչ միայն հայ գիրքն ու հայ թերթը — Հայաստանից եւս յղելով — տասնեակ հազարաւոր օրինակներով տարածել մեր ցեղակիցների մէջ, ոչ միայն գիտութեան եւ արուեստի նուաճումներին հաղորդակից անել այդ հոծ զանգուածները,— այդ նշանակում է միեւնոյն ժամանակ՝ բարձրացնել նրանց ազգային գիտակցութիւնը, ինքնավարմինների չնորհիւ եւ միջոցով սերտօրէն շաղկապել նրանց իրար հետ, բայց նաեւ՝ Հայաստանի հետ, հայ մշակոյթի կենդրոնի հետ։ Այդ նշանակում է՝ այժմու կենդրոնախոյս ուժերը փոխարինել կենդրոնածիգ ուժերով եւ ազդակներով։

Աւելին։ Քանի որ Անդրկովկասի երեք երկիրները այսօր մէկ հատիկ պետական օրգանիզմ են կազմում, քանի որ նրանք միասին որպէս մէկ հատիկ միաւոր մտնում են Խորհրդային Միութեան մէջ, ապա ուրեմն պարզ է ինքնին, որ ազգային-մշակութային ինքնավար մարմիններն էլ համապատասխան, յարկաւոր կառուցուածք պէտք է ունենան։

Ասենք, օրինակ, Վրաստանի եւ Ատրբէջանի հայ փոքրամասնութիւնները կարող են ունենալ իրենց առանձին-առանձին ինքնավար մարմինները (Բագուն եւ Թիֆլիսը կարող են եւ մինակնին առանձին միաւորներ կազմել), Հիւսիսային Կովկասինը եւ միւսները իրենցը, եւ սակայն դրանք բոլորը միանալով պիտի կազմեն ա) համանդրկովկասեան եւ բ) համամիութենական մշակութային ինքնավար կենդրոններ։ Հայաստանից դուրս գտնուող հայութիւնը չարունակելով իսկ մնալ պատկան երկրամասի պետական-վարչական մարմնի մի բաղադրիչ մասնիկը, մշակութապէս նա պիտի անպայման կապուի Հայաստանի հետ, Երեւանի հետ, այս կամ այն ձեւով, այս կամ այն կազմակերպական սիստեմով։

Եւ դա չատ հասկանալի է... Վրաստանի եւ Ատրբէջանի կառավարութիւնները կարող են այս կամ այն չափով վարել իրենց սահմաններում գտնուող հայկական հողամասերը՝ ասենք՝ ելեւմտային, տնտեսական, վարչական եւ այլ կարգի խնդիրները, բայց ոչ երբեք՝ մշակութային բնոյթ կրողները, որոնք հոգե-